

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 42/2

27 հոկտեմբերի 2015 թ.

Քննարկվեց «ԱՐԹԷՄ» ՍՊԸ-ի 01.10.2015 թ-ի դիմում-բողոքը ՀՀ ՖՆ Սևանի ՏՀՏ 15.09.2015 թ-ի թիվ 6108238 ակտի դեմ:

«Արթեմ» ՍՊԸ-ի բողոքում բերված փաստարկները.

Փոստային ծառայության միջոցով ստացվել է ՀՀ Ֆինանսների նախարարության Սևանի տարածքային հարկային տեսչության կողմից կազմված 15.09.2015թ. թիվ 6108238 ստուգման ակտը, որով «ԱՐԹԷՄ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև ընկերություն) նկատմամբ առաջադրվել է տուգանք 150.000 դրամի չափով:

Ընկերությունը գտնում է, որ Սևանի ՏՀՏ 15.09.2015 թ-ի թիվ 6108238 ստուգման ակտն անօրինական է և պետք է ճանաչվի անվավեր՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Ստուգման ակտում նշված է հետևյալը. «Քաղաքացի Հասմիկ Ալիխանյանի կողմից 21.08.2015թ.-ին ժամը 16:25-ին Սևան-Դիլիջան մայր. 6 կմ Հարսնաքարից դեպի թերակղզի հասցեում գտնվող «ԱՐԹԷՄ» ՍՊԸ-ին պատկանող հանրային սննդի կետից կատարվեց գնում 600 դրամի չափով՝ 3 հատ սառը սուրճ, որի դիմաց վճարումը կատարվեց կանխիկ դրամով: Վաճառողուհի Լիաննա Հարությունյանի կողմից գումարը չմուտքագրվեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրվեց: Ստուգում իրականացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետև ժամը 16:28-ին ՀԴՄ-ից դուրս բերվեց «Z» հաշվետվությունը՝ 0 դրամ ընդհանուր գումարով: «Z» հաշվետվությունը դուրս բերելուց հետո ժամը 16:28-ին մուտքագրվեց կատարված վճարման արժեքը՝ 600 դրամ և ժամը 16:29-ին նորից դուրս բերվեց «Z» հաշվետվությունը՝ 600 դրամ: Ստուգմամբ պարզվեց, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.03.2015 թ-ի թիվ 379-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 17-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները: Համաձայն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետի ՍՊԸ-ին առաջադրվում է տուգանք 150.000 դրամի չափով»:

Այսինքն, արձանագրվել է, թե իբր Հասմիկ Ալիխանյանի կողմից «ԱՐԹԷՄ» ՍՊԸ-ին պատկանող հանրային սննդի կետից գնվել է ապրանք, որի համար կատարված վճարման դիմաց ՀԴՄ կտրոն չի տրամադրվել:

Ընկերության տնօրենը բացարձակապես տեղյակ չի եղել նշված ստուգման մասին: Այսինքն, հարկային տեսչության աշխատակիցների այցի ժամանակ նա այնտեղ չի գտնվել, մինչդեռ ստուգման ակտում նշվել է, թե իբր ստուգումը կատարվել է իր մասնակցությամբ: 2015 թվականի օգոստոսի 21-ին ժամը 17:30-ի սահմաններում տնօրենն այցելել է ընկերությանը պատկանող հանրային սննդի կետ: Այդ ժամանակ աշխատակցուհի Լիաննա Հարությունյանը հայտնել է, որ ժամը 16:30-ի սահմաններում այցելել են Սևանի տարածքային հարկային տեսչության աշխատակիցները և ասել, որ իրենց հեռախոսազանգով ինչ-որ մի քաղաքացի տեղեկացրել է, որ հանրային սննդի կետից գնում է կատարվել և իրեն ՀԴՄ կտրոն չի

տրամադրվել: Լիաննա Հարությունյանը նրանց ասել է, որ նման բան տեղի չի ունեցել: Սակայն հարկային տեսչության աշխատակիցները պնդել են և ՀԴՄ-ի հետ ինչ-որ գործողություններ կատարել: Լիաննա Հարությունյանը փորձել է զանգահարել տնօրենին, սակայն հարկային տեսչության աշխատակիցները խնդրել են, որպեսզի չզանգահարի, ասելով, որ նրանք հետո տնօրենին կտեսնեն: Լիաննա Հարությունյանի խոսքերի համաձայն, նրան որևէ հանձնարարագիր կամ այլ փաստաթուղթ չեն ներկայացվել:

Դրանից հետո ստուգման հետ առնչվող բոլոր փաստաթղթերը ուղարկվել են փոստային ծառայության միջոցով:

Հարկ է նշել նաև, որ հանրային սննդի կետում սառը սուրճ ընդհանրապես չի վաճառվել, ինչից հետևում է, որ իրականում որևէ ստուգում չի իրականացվել:

Վերոգրյալից հետևում է, որ ստուգման ակտը պետք է ճանաչվի անվավեր: Ստուգման ակտը պետք է ճանաչվի անվավեր նաև այն պարզ պատճառով, որ այն կազմվել է ՀՀ օրենսդրության պահանջների կոպիտ խախտումներով, այն է՝ «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների խախտմամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով ընկերությունը խնդրում է ՀՀ ՖՆ Սևանի տարածքային հարկային տեսչության 15.09.2015 թ-ի թիվ 6108238 ստուգման ակտը չեղյալ համարել (անվավեր ճանաչել):

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Սևանի ՏՀՏ պետի ժամանակավոր պաշտոնակատարի 20.08.2015 թ-ի թիվ 6108238 հանձնարարագրի համաձայն «ԱՐԹԷՄ» ՍՊԸ-ում իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Սևանի ՏՀՏ 15.09.2015 թ-ի թիվ 6108238 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 150.000 դրամ:

Ակտի 2-րդ կետով մասնավորապես արձանագրվել է, որ քաղաքացի Հասմիկ Ալիխանյանի կողմից 21.08.2015 թ-ին ժամը 16:25-ին Սևան-Դիլիջան մայր. 6 կմ Հարսնաքարից դեպի թերակղզի հասցեում գտնվող «ԱՐԹԷՄ» ՍՊԸ-ին պատկանող հանրային սննդի կետից կանխիկ դրամով կատարվել է 600 դրամի գնում (3 հատ սառը սուրճ), սակայն վաճառողուհի Լիաննա Հարությունյանի կողմից գումարը չի մուտքագրվել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրվել: Ստուգում իրականացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվել են ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետև, ժամը 16:28-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել «Z» հաշվետվությունը՝ 0 դրամ գումարով, ժամը 16:28-ին մուտքագրվել է կատարված վճարման արժեքը՝ 600 դրամը, և ժամը 16:29-ին նորից դուրս է բերվել «Z» հաշվետվությունը: Արդյունքում, ՀՀ կառավարության 26.03.2015 թ-ի թիվ 379-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 17-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները խախտելու համար կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ

օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը՝ գումարով 150.000 դրամ:

Քննարկման ընթացքում ստուգումն իրականացրած անձինք նշեցին, որ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում իրականացնելու համար հիմք է հանդիսացել ընկերության կողմից իրացման շրջանառության իրական ծավալները չարտացոլելու վերաբերյալ կասկածները: Այսպես, ըստ ՀԴՄ-ից դուրս բերված ֆիսկալային հաշվետվության 17.06.2015 թ-ից մինչև 31.08.2015 թ-ն ընկած ժամանակահատվածում «ԱՐԹԷՍ» ՍՊԸ-ի իրացման շրջանառությունը կազմել է ընդամենը 19.980 դրամ, ինչն էլ ակնհայտորեն վկայում է ընկերության կողմից իրացման շրջանառության իրական ծավալները ՀԴՄ-ով չարտացոլելու մասին:

Քննարկմանը ներկա գտնվող քաղաքացի Հասմիկ Ալիսանյանը պնդեց, որ 21.08.2015 թ-ին ժամը 16:25-ին «ԱՐԹԷՍ» ՍՊԸ-ին պատկանող հանրային սննդի կետից իր կողմից գնվել է 3 հատ սառը սուրճ, որի դիմաց վճարված 600 դրամը վաճառողուհի Լիաննա Հարությունյանի կողմից չի մուտքագրվել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրվել: Այնուհետև, խախտման փաստն արձանագրելու համար մոտեցել են ստուգում իրականացնող հարկային ծառայողները, ներկայացրել են ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը, և հանձնարարագրով վերապահված լիազորությունների շրջանակներում սկսել են իրականացնել համապատասխան գործողություններ: Մասնավորապես, ժամը 16:28-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել «Z» հաշվետվությունը, որի համաձայն հասույթը կազմել է 0 դրամ: Նշված փաստը վկայում է այն մասին, որ տվյալ օրը մինչև 16:28-ն ընկած ժամանակահատվածում ՀԴՄ որևէ գումար չի մուտքագրվել, այն դեպքում, երբ օգոստոս ամիսին Սևանի տարածաշրջանը համարվում է բնակչության այցելության հիմնական վայրերից մեկը:

«Z» հաշվետվությունը դուրս բերելուց հետո ժամը 16:28-ին ՀԴՄ է մուտքագրվել կատարված վճարման արժեքը և ժամը 16:29-ին նորից դուրս է բերվել «Z» հաշվետվություն:

Ելնելով վերոգրյալ փաստական հանգամանքներից՝ Հանձնաժողովը գտնում է, որ տվյալ դեպքում ընկերության կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.03.2015 թ-ի թիվ 379-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 17-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները, ինչը և հիմք է հանդիսացել «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված պատասխանատվության միջոցը կիրառելու համար:


Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո ռ ո շ ու մ է՝

ՀՀ ՖՆ Սևանի ՏՀՏ 15.09.2015 թ-ի թիվ 6108238 ակտը թողնել անփոփոխ, իսկ բողոքը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ